

Ներքին Կարգուկանոն

Stadt Münster-ի Փախստականների և անօթևանների ժամանակավոր կացարաններում

Համաձայն Stadt Münster-ի կողմից 16.12.2016-ին ընդունված Ներքին կարգուկանոնի կանոնադրության § 3-ի 4-րդ պարբերության, ստորև ներկայացվում է Փախստականների և անօթևանների ժամանակավոր կացարաններից օգտվելու կարգը.

§ 1 Ընդհանուր

(1) Stadt Münster -ի տնօրինության տակ գտնվում են կացարաններ՝ փախստականներին և անօթևաններին ժամանակավոր կացություն տրամադրելու նպատակով: Կացարաններում աշխատանքի կազմակերպումը իրականացվում է անկախ կազմակերպությունների հետ համագործմամբ: Մանրամասները ներկայացված են Stadt Münster -ի Փախստականների և անօթևանների ժամանակավոր կացարաններից օգտվելու Ներքին կարգուկանոնի կանոնադրությամբ:

(2) Քաղաքային կացարանների բնակիչները ապրում են սեղմ սոցիալտնտեսական տարածքում: Սույն կանոնադրությունը ներկայացնում է ինչպես կացարանների բնակիչների, այնպես էլ նրանց այցելուների պարտականությունները:

(3) Փոխադարձ զիջողականությունը, դիմացինին հարգելը, հարևանին օգնելու պատրաստականությունը հանդիսանում են միասին ապրելու նախապայմանները:

(4) Ժամանակավոր կացարաններում բռնությունը տեղ չունի: Բռնության բոլոր արտահայտությունները, թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան և թե՛ բանավոր խոսքի միջոցով, ինչպես նաև խտրականության դրսևորումները խստորեն արգելվում են:

§ 2 Պատասխանատու անձիք – Ներքին կարգուկանոնի պահպանման իրավունքը

(1) Ժամանակավոր կացարանների վարչարարական (ադմինիստրատիվ) գործունեությունը իրացվում է Stadt Münster-ի և Անկախ կազմակերպությունների կողմից. Նրանք պատասխանատու են կացարանների հետ կապված բոլոր հարցերի համար: Սոցիալական և ներքին ծառայությունները ապահովում են կացարանների բնակիչների սոցիալտնտեսական պրոբլեմների լուծումը և ապահովությունը:

(2) Վերոհիշյալ ծառայությունների աշխատակիցները պատասխանատու են Ներքին կարգուկանոնի պահպանման համար և իրավունք ունեն պարբերաբար հսկողություն սահմանել՝ կարգի խախտումները արգելակելու նպատակով:

§ 3 Օգտագործման հարաբերությունները

(1) Կացարաններից օգտվելը ունի պետական- իրավական բնույթ, այսինքն՝ իրավական տեսակետից որևէ մեկը իրավունք չունի պահանջել որոշակի կացարանում որոշակի մեծության և հարմարավետության սենյակում տեղավորվելը:

(2) Ժամանակավոր կացարաններում ընտանիքներին և նույն սեռի միայնակ անձաց տրամադրվում է համապատասխան բնակելի տարածք: Միայնակ անձիք չեն կարող առանձին սենյակ պահանջել:

(3) Իրական հանգամանքներից էլնելով, կացարանների բնակիչները կարող են տեղափոխվել մեկ այլ կացարան: Կացարանից օգտվելու իրավունքը կարող է չեղյալ համարվել: Մանրամասները ներկայացված են Stadt Münster-ի Փախստականների և անօթևանների ժամանակավոր կացարանների Ներքին կարգուկանոնի կանոնադրության մեջ:

§ 4 Մուտք գործելու իրավունք

Stadt Münster-ի ինչպես նաև անկախ կազմակերպությունների աշխատակիցները կարող են մուտք գործել կացարանի և հարակից շինությունների տարածքը և սենյակները՝ ըստ ներքոհիշյալի.

- աշխատանքային օրերին՝ ժամը 7- ից մինչև 18 -ը ընկած ժամանակահատվածում, եթե բնակիչներին ժամանակին այդ մասին տեղեկացրել են և եթե իրավական հանգամանքները (օրինակ՝ վերանորոգում, իրավիճակի ստուգում, ջեռուցման կամ հոսանքի տվյալների ընթերցում և այլն), կարիքի դեպքում արհեստավորների ուղեկցությամբ,
- վտանգի դեպքում՝ օրվա ցանկացած ժամին:

§ 5 Տարածքային պայմանները

(1) Տրամադրված սենյակները նախատեսված են միայն այնտեղ ուղարկված բնակիչների համար և միայն բնակության նպատակով: Կացարանում կենդանիներ պահել չի թույլատրվում:

(2) Բնակիչները պարտավոր են կացարանը և կացարանին պատկանող կահկարասին խնամքով օգտագործել: Նրանք իրավունք չունեն կահկարասին կամ էլեկտրական ապրանքները սենյակներից կամ ընդհանուր օգտագործման տարածքներից հանել, քանդել կամ տեղափոխել: Սեփական կահույքների կամ էլեկտրական ապրանքների տեղադրումը կացարանի տարածքում թույլատրվում է միայն կացարանի ղեկավարության հատուկ թույլտվությամբ:

(3) Կացարանի բնակիչները իրավունք չունեն արբանյակային ալեհավաք (ափսե) տեղադրել իրենց սենյակներում կամ կացարանի շինության այլ հատվածում: Նմանապես չի թույլատրվում հեռախոսային կապ անցկացնել կամ դրանց անկացման համար որևէ մեկին պատվեր տալ:

(4) Բնակիչները իրավունք չունեն կացարաններում փոփոխություններ կատարել:

(5) Բնակիչներն իրենք պետք է հոգան սենյակների բավարար չափով ջեռուցման և օդափոխման մասին:

(6) Stadt Münster-ի համաձայնությամբ, կացարանի ընդհանուր սենյակները կարող են օգտագործվել հասարակական միջոցառումների կազմակերպման և անցկացման համար:

§ 6 Անվտանգության ապահովումը

(1) Կացարանում բնակվող անձիք և նրանց այցելուները պարտավոր են անվտանգության ապահովման համար մշտապես ազատ թողնել

- բոլոր պատուհաններն ու դռները, միջանցքները, աստիճանահարթակները և այգիների արահետները,
- փրկարար մարմինների և փախուստի համար նախատեսված ճանապարհները, հրշեջ մեքենաների ճանապարհները և շենքի մուտքերը, ներքնահարկերի մուտքերը,

լվացքատները և չորանոցները չի կարելի իբրև ավելորդ ապրանքների կամ աղբի կուտակման տարածք օգտագործել: Հակառակ դեպքում կացարանի աշխատակիցները կարող են անօրինաբար այդտեղ գտնվող ապրանքները և առարկաները առանց նախազգուշացման թափել կամ տեղափոխել:

(2) Հրդեհից պաշտպանվելու ընդհանուր կանոնները ենթակա են պահպանման: Բաց կրակը, լուսային հրդեհավտանգ աղբյուրների օգտագործումը և խարույկը կացարանի և հարակից շինությունների տարածքում արգելվում է: Տարատեսակ հրդեհավտանգ և պայթուցիկ օբյեկտների պահպանումը կացարանի տարածքում խստիվ արգելվում է: Կրակմարիչները և հրդեհի ազդանշանման համակարգերը կարող են օգտագործվել միայն հրդեհի դեպքում:

(3) Հիմք ընդունելով Infektionsschutzgesetz-ի (Վարակից պաշպանվելու մասին օրենքի) § 6 և 34- ի, հաշվառման ենթակա սուր վարակիչ հիվանդությունները պետք է հիվանդի և կացարանի մյուս բնակիչների կողմից անմիջապես հայտնվեն սոցիալական կամ ներքին ծառայության աշխատակիցներին, հակառակ դեպքում դրանց հաղորդումը Stadt Münster-ի և կամ անկախ կազմակերպությունների աշխատակիցների կողմից կիրականացվի վարակակիր հիվանդի հաշվին: Հաշվառման ենթակա սուր վարակիչ հիվանդությունները հետևյալն են. խոլերա, դիֆտերիա, հեպատիտ, ոչիլ մազերի մեջ, խոզուկ, մենինգիտ, քութեշ, կարմրուկ, ժանտախտ, կարմրախտ, տիֆ, թոքախտ, կատաղախտ, կապույտ հագ:

(4) Ծխելը ժամանակավոր կացարաններում խստիվ արգելվում է: Կացարանում ծխելու դեպքում սահմանված է տուգանք:

§ 7 Կարգի պահպանում

(1) Կացարանի բնակիչները պարտավոր են միմյանց նկատմամբ փոխադարձաբար հանդուրժող լինել և պահպանել խաղաղ կեցությունե կացարանի ներսում: Բնակիչների հանգիստը խանգարող աղմուկը թե՛ ցերեկվա, թե՛ գիշերվա ժամերին չի թույլատրվում: Գիշերային հանգստի պահպանումը ժամը 22- ից մինչև 7- ը պարտադիր է:

(2) Կացարանում բնակության իրավունք չունեցող անձիք կարող են կացարանում և հարակից տարածքներում գտնվել միայն ժամը 7- ից 22- ը ընկած ժամանակահատվածում.:

(3) Կացարանում և հարակից տարածքներում արհեստավորական և արվեստագիտական բնույթի ազատ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը արգելվում է:

(4) Լվացքի և լվացքի չորացման մեքենաները կարող են օգտագործել միայն կացարանի բնակիչները՝ իրենց անձնական լվացքը անելու համար: Նրանք պարտավոր են պահպանել այդ մեքենաներից օգտվելու կանոնները, այդ թվում մեքենայի ծավալը լիարժեք օգտագործելը:

(5) Ջուրը օգտագործվում է միայն սպառողի անձնական կարիքների և կենցաղային առարկաների մաքրման նպատակով: Ջրի օգտագործումը գորգերի մաքրման համար արգելվում է: Այդ նպատակով կացարանի ներքին ծառայության աշխատակիցները բնակիչներին տրամադրում են ջրային փոշեծծիչ:

(6) Ամեն տեսակի զենքերի և զինամթերքների պահպանումը կացարանի տարածքում խստիվ արգելվում է: Նմանապես արգելվում է իսկական զենքերի և զինամթերքների բացառիկ նմանությամբ պատրաստված խաղալիքների առկայությունը, որոնք երրորդ անձին կարող են շփոթության մեջ գցել և իսկականի տեղ անցնել:

§ 8 Մաքրություն

- (1) Բնակիչները պարտավոր են կացարանի տարածքը և իրենց հատկացված սենյակները մաքուր և կանոնավոր պահել:
- (2) Աղբը համապատասխանաբար բաժանվում է դրա համար նախատեսված տարաբնույթ տարաների օգնությամբ: Ոչ կենցաղային աղբի փոխադրման համար բնակիչները կարող են դիմել ներքին ծառայության աշխատակիցներին:
- (3) Մեծածավալ ապրանքների աղբահավաքումը Մյունսթերի Աղբահավաք ձեռնարկության կողմից իրացվում է դրա համար նախատեսված հատուկ օրերին: Նշված ամսաթվին աղբազանգվածը պետք է դրվի փողոցի մայթաեզրին: Կացարանի և հարակից շինությունների կեղտոտման դեպքում կեղտոտողը ինքն է պարտավոր մաքրել այդ ամենը: Չանելու դեպքում, աշխատակիցները կկազմակերպեն մաքրումը՝ դրա համար հատկացված գումարը գանձելով կեղտոտող անձից:
- (4) Կենցաղային, խոհանոցային թափոնները չի կարելի նետել գուգարանի, լվացարանի, դուշի, վաննայի մեջ:
- (5) Կեղտաջրերը պետք է թափել դրանց համար նախատեսված կոյուղու համահոսի մեջ և ոչ թե պարզապես թափել փողոց:

§ 9 Երթևեկության միջոցներ

- (1) Երթևեկության միջոցները թույլատրվում է կայանել դրանց համար նախատեսված կայանատեղերում: Այն կայանատեղերը, որոնք նախատեսված են միայն Stadt Münster-ի և անկախ կազմակերպությունների աշխատակիցների համար, բնակիչները չեն կարող օգտագործել: Դրանք բացառապես կացարանի աշխատողների համար են:
- (2) Կացարանի տարածքում կարող են կայանել միայն պաշտոնապես թույլատրված տրանսպորտային միջոցները:
- (3) Անօրինաբար կայանած մեքենաները կտեղափոխվեն մեքենայի տիրոջ հաշվին:
- (4) Ավտոմեքենայի լվացումը, յուղի փոխելը կամ ավտոմեքենայի նորոգումը կացարանի տարածքում արգելվում է:

§ 10 Կացարանից տեղափոխվելը

- (1) Եթե ժամանակավոր կացարանի բնակիչները մտադիր են կացարանից տեղափոխվել, նրանք պարտավոր են այդ մասի անմիջապես գրավոր կամ բանավոր տեղեկացնել Stadt Münster-ի և կամ Ներքին ծառայության աշխատակիցներին: Կացարանի կողմից բնակիչներին տրամադրված բանալիները և այլ առարկաները տեղափոխվելուց առաջ պետք է վերադարձվեն:
- (2) Եթե կացարանը մեկ ամսից ավելի առանց Stadt Münster-ի թույլտվության անբնակ մնա, այն կարող է նույն Stadt Münster-ի կողմից հետ վերցվել: Կացարանի բնակիչները պարտավոր են իրենք հոգալ իրենց կենցաղային առարկաների ու անձնական իրերի պահելու հետ կապված ծախսերը, ինչպես նաև լրացուցիչ բանալու ծախսերը:

(3) Stadt Münster-ը գրավոր պահանջում է կացարանի տարածքում պահ տրված առարկաները որոշակի ժամանակահատվածում այնտեղից տանել: Պահանջը չկատարելու դեպքում Stadt Münster-ը իրավունք ունի այդ առարկաները դնել աճուրդի: Եթե կացարանի բնակչի նոր հասցեն անհայտ է, Stadt Münster-ը իրավունք ունի, բնակչի սենյակը հետ վերցնելուց երեք ամիս հետո պահ տված առարկաները դնել աճուրդի: Անարժեք և ակնհայտորեն օգտագործման համար ոչ պիտանի առարկաները կարող են ոչնչացվել:

Մյունսթեր, 12.03.2018

ստորագր.

Markus Lewe
Օբերբուրգոմիստր